# «ԷՅ-Ի-ՋԻ Սերվիս»ՍՊԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2013թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

Աուդիտոր՝

GSC
Your Future With Us

## Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 5
Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 9

«ՋԵՆԵՐԱԼ ՍՏԱՆԴԱՐԴ ՔՐՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ

0021 Երևան, Աղոնցի 10
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.: +374 60 441041
Ֆաքս: +374 60 441041 (ներքին 102)
Էլ. հասցե: general@gsc.am

**Անկախ աուդիտորական եզրակացություն**

«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի («Ընկերություն») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների և համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ բացատրական տեղեկատվություն:

*Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին հսկողության համակարգի մշակումը, կիրառումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների և համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

*Այլ հանգամանքներ*

Մենք Ձեր ուշադրությանն ենք հրավիրում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 13-ի վրա, որը վերաբերում է Ընկերության կողմից համատեղ հսկվող «Էյ-Ի-Ջի» ՍՊԸ-ում ունեցած իր մասնակցության վաճառքի գործարքին: Ծանոթագրությունում բացահայտված է, որ գործարքը տեղի է ունեցել փոխկապակցված անձանց միջև և այն շուկայական չէ: Մեր կարծիքը չի ձևափոխվել այդ հանգամանքի առնչությամբ:

Արա Մարկոսյան
Տնօրեն
24 հունիսի 2014թ.

Թորոս Վարդանյան
Աուդիտոր

| **հազ. դրամ** | 2013 | 2012 |
|---|---|---|
| Հասույթ | 2,302,294 | 2,072,499 |
| Ինքնարժեք | (1,138,741) | (1,034,147) |
| **Համախառն շահույթ** | **1,163,553** | **1,038,352** |
| Այլ եկամուտ | 18,688 | 19,983 |
| Վարչական ծախսեր | (459,726) | (447,915) |
| Իրացման ծախսեր | (48,312) | (59,512) |
| Այլ ծախսեր | (18,432) | (37,257) |
| **Գործառնական գործունեության արդյունքները** | **655,771** | **513,651** |
| Ֆինանսական եկամուտներ | 15,637 | 11,049 |
| Ֆինանսական ծախսեր | (40,941) | (22,030) |
| **Զուտ ֆինանսական ծախսեր** | **(25,304)** | **(10,981)** |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներից եկամուտ | 34,406 | 1,187,990 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների արժեզրկում | (34,406) | - |
| **Շահույթ մինչև շահութահարկով հարկումը** | **630,467** | **1,690,659** |
| Շահութահարկի գծով ծախս | (115,324) | (99,978) |
| **Շահույթը և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **515,143** | **1,590,681** |

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են ղեկավարության կողմից 2014թ. հունիսի 24-ին:

Արսեն Հարությունյան
Գլխավոր տնօրեն

Նարինե Մարգարյան
Գլխավոր հաշվապահ

| հազ. դրամ | Ծնթզ. | 31 դեկտեմբերի 2013թ. | 31 դեկտեմբերի 2012թ. | 1 հունվարի 2012թ. |
|---|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | վերահաշվարկված | վերահաշվարկված/չստուգված |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | | |
| Հիմնական միջոցներ | | 512,970 | 486,976 | 373,115 |
| Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ շինարարություն | | 263,105 | 280,342 | 241,432 |
| Ներդրումային գույք | | 79,716 | 79,716 | 79,716 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 5,352 | 4,189 | 4,098 |
| Ներդրումներ համատեղ վերահսկվող կազմակերպությունում | | - | 1,195,490 | - |
| Հետաձգված հարկային ակտիվ | | 11,578 | 7,091 | 15,580 |
| Տրված կանխավճարներ | | - | 963 | - |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **872,721** | **2,054,767** | **713,941** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | | |
| Պաշարներ | | 131,195 | 152,101 | 125,944 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | | 689,871 | 473,572 | 289,311 |
| Տրված փոխառություններ | | 50,000 | 118,000 | 214,014 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | 50,606 | 177,235 | 282,732 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | | 11,855 | 24,365 | 8,356 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **933,527** | **945,273** | **920,357** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **1,806,248** | **3,000,040** | **1,634,298** |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
| **Սեփական կապիտալ** | | | | |
| Բաժնետիրական կապիտալ | | 2,000 | 2,000 | 2,000 |
| Չբաշխված շահույթ | | 1,421,291 | 2,503,509 | 937,924 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **1,423,291** | **2,505,509** | **939,924** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | | |
| Ակտիվներին վերաբաշխվող շնորհներ | | 10,095 | 12,858 | 70,813 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **10,095** | **12,858** | **70,813** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | | 356,866 | 369,488 | 551,731 |
| Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով | | 15,763 | 111,955 | 71,609 |
| Եկամուտներին վերաբաշխվող շնորհներ | | 233 | 230 | 221 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **372,862** | **481,673** | **623,561** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **382,957** | **494,531** | **694,374** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **1,806,248** | **3,000,040** | **1,634,298** |

| **հազ. դրամ** | **Կանոնադրա կան կապիտալ** | **Չբաշխված շահույթ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. նախկինում ներկայացված | 2,000 | 937,924 | 939,924 |
| Սխալի ուղղման հետևանքը (Ծնթ 25) | - | 1,187,990 | 1,187,990 |
| Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. վերահաշվարկված | 2,000 | 2,125,914 | 2,127,914 |
| Շահաբաժինների ավելի վաղ վճարելու ազդեցություն (Ծնթ 19 բ) | - | (25,097) | (25,097) |
| Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար | - | 402,692 | 402,692 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.** ***չստուգված*** | **2,000** | **2,503,509** | **2,505,509** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2013թ. նախկինում ներկայացված | **2,000** | **2,503,509** | **2,505,509** |
| Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար | - | 515,143 | 515,143 |
| Ներդրման արժեզրկում (Ծնթ 13) | - | (1,187,990) | (1,187,990) |
| Շահաբաժինների ավելի վաղ վճարելու ազդեցություն (Ծնթ 19 բ) | - | (2,371) | (2,371) |
| Մասնակիցներին վճարված շահաբաժիններ | - | (407,000) | (407,000) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.** | **2,000** | **1,421,291** | **1,423,291** |

| հազ. դրամ | 2013թ. | 2012թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Իրացումից ստացված գումարներ, ներառյալ ԱԱՀ-ն | 3,930,724 | 3,537,267 |
| Վճարումներ մատակարարներին | (981,042) | (641,326) |
| Վճարումներ աշխատակիցներին | (1,568,738) | (1,751,370) |
| Շահութահարկի գծով վճարումներ | (58,000) | (162,438) |
| Հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով վճարումներ | (886,408) | (560,214) |
| Այլ ստացված գումարներ | 20,319 | 5,118 |
| Այլ վճարումներ | (8,684) | (182,073) |
| **Զուտ դրամական միջոցներ գործառնական գործունեությունից** | **448,171** | **244,964** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (136,576) | (227,964) |
| Տրված փոխառությունների մարումներ | 128,591 | 108,920 |
| Փոխառությունների տրամադրում | (50,000) | (17,890) |
| Ստացված տոկոսներ | 2,090 | 2,347 |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(55,895)** | **(134,587)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | 1,635,228 | 1,205,262 |
| Վարկերի և փոխառությունների մարումներ | (1,635,228) | (1,205,262) |
| Մասնակիցներին վճարված շահաբաժիններ | (505,562) | (217,402) |
| Վճարված տոկոսներ | (11,531) | (3,702) |
| Բանկային ծառայությունների վճարներ և վնասներ փոխարկումից | (3,478) | - |
| **Ֆինանսավորման գործունեությամբ (օգտագործված) զուտ դրամական միջոցներ** | **(520,571)** | **(221,104)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)** | **(128,295)** | **(110,727)** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի | 177,235 | 282,732 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 1,666 | 5,230 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի (ծանոթագրություն 18)** | **50,606** | **177,235** |